ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«31» հոկտեմբերի 2014թ. N 212

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 8-Ի N 238 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուկաշին համայնքի ղեկավարի 2014 թվականի հոկտեմբերի 15-ի, N64, «Այգեշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2014 թվականի հոկտեմբերի 17-ի, «Դողսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի գրությունները

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2010 թվականի հուլիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների կազմերը հաստատելու մասին» N 238 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1)որոշմամբ հաստատված հավելվածում՝

ա.«Լուկաշինի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի կազմում «4.Խորոզյան Փանոս - համայնք» բառերը փոխարինել «4.Մկրտչյան Կարեն - համայնք» բառերով,

բ.«Այգեշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի կազմում «5.Հովսեփյան Նաիրա - ուսուցիչ» բառերը փոխարինել «5.Խաչատրյան Սուսաննա - ուսուցիչ» բառերով,

գ.«Դողսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի կազմում «8.Ղազարյան Սառա– ծնող» բառերը փոխարինել «8.Հովհաննիսյան Կարինե - ծնող» բառերով,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ